AMERIABANK

# Շնորհանդես

## ներդրողների համար

31 դեկտեմբերի, 2023

1. **Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ**

2. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ կարճ անդրադարձ

3. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ ֆինանսական արդյունքներ

4. Ռազմավարության հիմնական ուղղությունները

5. Հավելվածներ

# Բարելավելով կյանքի որակը

1 **Հայաստանի առաջատար բանկը**
Շուկայի առաջատարը հիմնական ֆինանսական ցուցանիշներով գրեթե մեկ տասնամյակ շարունակ, աջակցություն Հայաստանի տնտեսության բոլոր ճյուղերին

2 **Ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ հարթակ՝ թվային լուծումների լայն կիրառմամբ**
Բեռնաթափման* ցուցանիշ՝ 98%, կանխիկ գործառնությունների գծով բեռնաթափման** ցուցանիշ՝ 85%, ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակից՝ 72%, ամսական ակտիվ օգտատերերի թվի արագ աճ

3 **Հաճախորդների և աշխատակիցների գոհունակություն**
Սպասարկման բարձր որակ և հաճախորդների գոհունակություն, աշխատակիցների բավարարվածության և ներգրավվածության բարձր մակարդակ, առաջատար դիրք ըստ կորպորատիվ մշակույթի և արժեքների

4 **Բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման լավագույն մեթոդները**
Բիզնեսի պատասխանատու վարում, բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավար-ման մշակույթի խթանում, «Կանաչ» պարտատոմսերի առաջին թողարկողը Հայաստանում, լավագույն փորձի վրա հիմնված կորպորատիվ կառավարման համակարգ, արհեստավարժ Խորհուրդ և փորձառու ղեկավարներ

5 **Կայունություն և ճկունություն՝ աճի զգալի ներուժով**
Լավ արդյունքների ապահովում անգամ դժվարին ժամանակներում, արագ աճ և բարձր ֆինանսական արդյունքներ հետհամաճարակային շրջանում, աննախադեպ բարձր եկամտաբերություն

6 **Գրավիչ մակրոտնտեսական միջավայր**
Զարգացող տնտեսություն՝ ճգնաժամերին և արտաքին ցնցումներին դիմակայելու ունակությամբ, ՀՆԱ-ի երկնիշ աճ, գնաճի ամենացածր ցուցանիշը տարածաշրջանում

*Բեռնաթափման ցուցանիշ կամ մասնաճյուղերի բեռնաթափման ցուցանիշ՝ հեռավար և թվային ուղիներով կատարված գործարքների մասնաբաժինը բանկի կողմից կատարված գործարքների ընդհանուր թվում

**Կանխիկ գործառնությունների գծով բեռնաթափման ցուցանիշ՝ հեռավար և թվային ուղիներով (ԻԲ, ՄԲ, POS/VPOS) կատարված անկանխիկ գործարքների մասնաբաժինը գործարքների ընդհանուր թվում

# Հայաստանի բանկային համակարգի առաջատարը

## Ընդհանուր ակնարկ

- Կորպորատիվ, ներդրումային և մանրածախ բանկային ծառայություններ մատուցող առաջատար ունիվերսալ բանկը Հայաստանում
- Մեծ ներդրում Հայաստանի բանկային համակարգի զարգացման մեջ
- Շարունակական գնահատանք և որակի ճանաչում հեղինակավոր միջազգային հաստատությունների կողմից
- Հնարավոր ամենաբարձր վարկանիշ՝ սուվերեն վարկունակության սահմանափակումների շրջանակներում

**26** մասնաճյուղ

**1,812** աշխատակից

Բանկոմատների ամենամեծ ցանցը մայրաքաղաքում

vPOS տերմինալների խոշորագույն ցանցը երկրում

POS տերմինալների ամենամեծ ցանցերից մեկը երկրում

## Բաժնետիրական կառուցվածք



Աֆեյան Ֆաունդեյշն ֆոր Արմենիա Ինկ. 7.5%

Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթեդ 12.1%

ԱԶԲ 13.9%

ՎԶԵԲ 17.7%

Իմաստ Գրուպ (Սի Ուայ) Լիմիթեդ 48.8%

**NPS** 79.0%

**CEI*** 9.8

**S&P** BB-

**Moody's** Ba3

**Ակտիվներ**
15.3%
Մասնաբաժինը շուկայում

**Վարկեր**
19.6%
Մասնաբաժինը շուկայում

**Պարտավորություններ**
15.7%
Մասնաբաժինը շուկայում

**Կապիտալ**
13.2%
Մասնաբաժինը շուկայում

**Զուտ շահույթ**
18.0%
Մասնաբաժինը շուկայում

*NPS՝ Հաճախորդների հավատարմության գործակից
CEI՝ Հաճախորդների փորձառության գործակից, որի առավելագույն արժեքը 10 է

1. Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ

**2. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ կարճ անդրադարձ**

3. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ ֆինանսական արդյունքներ

4. Ռազմավարության հիմնական ուղղությունները

5. Հավելվածներ

# 2023թ. 4-րդ եռ. ձեռքբերումները

**2023թ. 4-րդ եռ. դրությամբ**

| | | |
|---|---|---|
| **985 մլրդ**<br>ՀՀ դրամի վարկեր* | **1,410 մլրդ**<br>ՀՀ դրամի ակտիվներ | **1,214 մլրդ**<br>ՀՀ դրամի պարտավորություններ |
| **1,026 մլրդ**<br>ՀՀ դրամի ավանդներ** | **196 մլրդ**<br>ՀՀ դրամի սեփական կապիտալ | **46.1 մլրդ**<br>ՀՀ դրամի շահույթ |

- Ամերիաբանկը ճանաչվել է թվային լուծումներ առաջարկող լավագույն բանկը Հայաստանում 2023թ. Euromoney ամսագրի կողմից
- Շահութաբերության բարձր ցուցանիշներ՝ կապիտալի և ակտիվների եկամտաբերությունը կազմել է համապատասխանաբար 25.6% և 3.5%։
- Վարկային պորտֆելի բարձր աճ (մինչև 33% տարեկան աճ)՝ զուգակցված ակտիվների բարձր որակի հետ (խնդրահարույց ակտիվների ցուցանիշը կազմել է 1.9%)։
- Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակիցը կազմել է 72%՝ տարեկան կտրվածքով ավելանալով 9 տոկոսային կետով։
- Հաճախորդների հավատարմության գործակիցը կազմել է 79.0%, իսկ հաճախորդների փորձառության գործակիցը***՝ 9.8։

* Առանց արժեզրկման մասհանումների, բայց ներառյալ առևտրի ֆինանսավորումը
** Ընթացիկ հաշիվներ, ժամկետային ավանդներ և պարտատոմսեր
*** Հաճախորդների փորձառության գործակից, որի առավելագույն արժեքը 10 է

# Ռազմավարական իրադարձություններ

**Ամերիաբանկը կմիանա Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված Bank of Georgia Group PLC ֆինանսական խմբին**

BANK OF GEORGIA GROUP PLC

- Ձեռք է բերվել պայմանավորվածություն, համաձայն որի Bank of Georgia Group PLC-ն (այսուհետ՝ «ԲիՕՋիՋի» կամ «Խումբ») նախատեսում է գնել Ամերիաբանկի 100% բաժնետոմսերը («Գործարք»):
- Բաժնետոմսերի 90%-ը ձեռք կբերվի անմիջապես, իսկ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) բաժնեմասնակցությունը 10%-ի չափով առայժմ կպահպանվի:
- Գործարքը ենթակա է հաստատման բաժնետերերի, ինչպես նաև կարգավորող մարմինների, այդ թվում՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:
- Գործարքի ավարտից հետո, երբ Ամերիաբանկը միանա ԲիՕՋիՋի-ին, նախատեսվում է իրականացնել ԲիՕՋիՋի-ի վերաբրենդավորում՝ նշանավորելով զարգացման նոր ուղու սկիզբը:
- Ամերիաբանկը կգործի որպես առանձին ընկերություն Խմբի կազմում՝ պահպանելով իր ապրանքանիշը և կորպորատիվ ինքնությունը:

**Հիմնավորումներ՝**

**Կապիտալի հասանելիություն**

Կապիտալի միջազգային շուկաների հասանելիություն՝ FTSE 250 մասնակից հանդիսացող մայր ընկերության շնորհիվ

**Աճի ներուժ**

Աճի ներուժ՝ Խմբի փորձը ուղղելով ապագա զարգացման մեջ

**Տարածաշրջանային համագործակցություն**

Տարածաշրջանային ծրագրերի և բիզնեսի զարգացման հեռանկարներ՝ հարևան երկրում փոխկապակցված ընկերություն ունենալու շնորհիվ

1. Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ

2. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ կարճ անդրադարձ

3. **2023թ. 4-րդ եռամսյակ՝ ֆինանսական արդյունքներ**

4. Ռազմավարության հիմնական ուղղությունները

5. Հավելվածներ

# Հիմնական գործունեությունը

## Վարկային պորտֆել

Մլրդ ՀՀ դրամ




## Վարկային պորտֆելի կառուցվածքը




## Հիմնական ցուցանիշները

- Բանկն ունի ՀՀ տնտեսության վարկավորման ամենախոշոր պորտֆելը. վարկային պորտֆելի տարեկան աճը կազմել է 33%, իսկ շուկայի մասնաբաժինը՝ 19.6%՝ աճելով 2 տոկոսային կետով։
- Ինչպես կորպորատիվ, այնպես էլ մանրածախ վարկային պորտֆելները գրանցել են բարձր աճ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով համապատասխանաբար 38%-ով և 27%-ով։
- Մանրածախ և ՓՄՁ վարկերի բարձր մասնաբաժին (61%)՝ ունիվերսալ բանկային մոդելին համապատասխան։
- Ավանդների և պարտատոմսերի ընդհանուր ծավալը տարեկան կտրվածքով աճել է 17%-ով, ինչը պայմանավորված է թե՛ ժամկետային, թե՛ ցպահանջ ավանդների աճով։ Մանրածախ ավանդների և պարտատոմսերի պորտֆելն ավելացել է 29%-ով՝ չնայած ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակից բխող անորոշությունների։

## Ավանդներ և պարտատոմսեր*

Մլրդ ՀՀ դրամ




## Կորպորատիվ ավանդներ և պարտատոմսեր

Մլրդ ՀՀ դրամ




## Մանրածախ ավանդներ և պարտատոմսեր

Մլրդ ՀՀ դրամ




*«Պարտատոմսեր ներքին շուկայում» ցուցանիշը ներառում է ներքին շուկայում թողարկված և մանրածախ ու կորպորատիվ հաճախորդներին, ինչպես նաև ֆինանսական հաստատություններին վաճառված պարտատոմսերը։

# Ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը

## Ակտիվներ
Մլրդ ՀՀ դրամ




## Պարտավորություններ և կապիտալ
Մլրդ ՀՀ դրամ




## Հիմնական ցուցանիշները

- Ընդհանուր ակտիվների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 13%-ով, իսկ սեփական կապիտալը՝ 14%-ով:
- Հաշվեկշռի դիվերսիֆիկացված կառուցվածք, որտեղ տոկոսաբեր ակտիվները կազմում են ընդհանուր ակտիվների 88%-ը, իսկ պարտավորությունները հաճախորդների նկատմամբ՝ ընդհանուր պարտավորությունների 85%-ը:
- Բանկը պահպանում է պորտֆելի բացառիկ դիվերսիֆիկացումը՝ հավասարապես ներգրավելով տնտեսության բոլոր ճյուղերը:

## Ակտիվների կառուցվածքը




## Պարտավորությունների կառուցվածքը




## Վարկային պորտֆելի կառուցվածքը



# Կորպորատիվ և մանրածախ բանկային գործառնություններ

### Կորպորատիվ վարկեր

Մլրդ ՀՀ դրամ




### Մանրածախ վարկեր

Մլրդ ՀՀ դրամ




### Հիմնական ցուցանիշները

- Կորպորատիվ վարկերի ծավալը նախորդ տարվա համեմատ 38% բարձր աճ է գրանցել՝ թե՛ ՓՄՁ, թե՛ խոշոր վարկերի հաշվին:
- ՓՄՁ-ներին տրված վարկերի ընդհանուր պորտֆելը կազմել է 224 մլրդ ՀՀ դրամ՝ տարեկան կտրվածքով աճելով 33.4%-ով:
- Առևտրի ֆինանսավորման ընդհանուր պորտֆելը (հաշվեկշռային և հետհաշվեկշռային) նախորդ տարվա համեմատ աճել է 87%-ով հետհաշվեկշռային երաշխիքների բարձր աճի շնորհիվ:
- Մանրածախ վարկերի պորտֆելը տարեկան կտրվածքով աճել է 27%-ով՝ արձանագրելով զգալի աճ մանրածախ վարկերի բոլոր տեսակների գծով:

### Լիզինգ

Մլրդ ՀՀ դրամ




### Առևտրի ֆինանսավորում (հաշվեկշռային / հետհաշվեկշռային)

Մլրդ ՀՀ դրամ




## 419 մլրդ ՀՀ դրամ

**Մանրածախ վարկեր**

## 530 մլրդ ՀՀ դրամ

**Կորպորատիվ վարկեր**

# Վարկային պորտֆելի որակը

### Խնդրահարույց վարկեր (3-րդ փուլ)




### Ծածկույթի գործակից (3-րդ փուլ)




### Հիմնական ցուցանիշները

- Խնդրահարույց վարկերի ցուցանիշը բարելավվել է՝ իջնելով մինչև 1.9%:
- Վարկային ռիսկի արժեքը բարելավվել է՝ կազմելով 0.6%:

### Վարկային ռիսկի արժեքը




**1.9%**
**Խնդրահարույց վարկեր**

**0.6%**
**Վարկային ռիսկի արժեքը**

**83%**
**Ծածկույթի գործակից**

# Կապիտալ

### 1-ին մակարդակի կապիտալի համարժեքությունը




### Ռիսկով կշռված ակտիվներ
Մլրդ ՀՀ դրամ




### Հիմնական ցուցանիշները

- Կապիտալի համարժեքության գործակիցները զգալիորեն բարձր են նվազագույն նորմատիվային պահանջներից:
- Բանկը պարտավորվել է պահպանել կապիտալի բարձր ցուցանիշը՝ պահուստային կապիտալի ավելացման ժամանակացույցին համապատասխան:

### Ընդհանուր կապիտալի համարժեքության գործակից




16.8%

## Կապիտալի համարժեքության գործակից

# Ֆինանսավորում և իրացվելիություն

## Ստորադաս փոխառություններ

Մլրդ ՀՀ դրամ




## Վարկերի հարաբերությունը ավանդներին և փոխառություններին




## Հիմնական ցուցանիշները

- Վարկերի հարաբերակցությունը ավանդներին և փոխառություններին կազմել է 88%՝ ավելանալով 14 տոկոսային կետով։
- Իրացվելիության ցուցանիշները (ծածկույթի գործակիցը և զուտ կայուն ֆինանսավորման գործակիցը) բավականին բարձր են սահմանված ցուցանիշներից (100%)։

## Իրացվելիության ծածկույթի գործակից




## Զուտ կայուն ֆինանսավորման գործակից




*Վարկեր մի քանի նպատակային հիմնադրամներից՝ ուղղված ՀՀ մասնավոր հատվածի միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների աջակցությանը։

# Եկամուտ

## Տոկոսային եկամուտ

Մլրդ ՀՀ դրամ




## Ոչ տոկոսային եկամուտ

Մլրդ ՀՀ դրամ




## Հիմնական ցուցանիշները

- Զուտ տոկոսային եկամուտը նախորդ տարվա համեմատ գրանցել է տպավորիչ աճ 49%-ով, որն ապահովվել է թե վարկային, թե արժեթղթերի պորտֆելների հաշվին։
- Զուտ տոկոսային մարժան բարձր էր միջին շուկայական ցուցանիշից 0.6 տոկոսային կետով և կազմել է 6.6%՝ ավելանալով 1.2 տոկոսային կետով։
- Զուտ ոչ տոկոսային եկամուտը տարեկան կտրվածքով նվազել է 33%-ով հիմնականում բարձր բազային էֆեկտի պատճառով, որն առաջացել է 2022թ. առաջին կիսամյակում արտարժութային գործառնություններից ստացված միանգամյա բացառիկ բարձր եկամտի պատճառով։

### Զուտ տոկոսային մարժա



# Արդյունավետություն և շահութաբերություն

### Զուտ շահույթ
Մլրդ ՀՀ դրամ




### Ծախսերի հարաբերությունը եկամտին




### Ակտիվների եկամտաբերություն




### Կապիտալի եկամտաբերություն




### Հիմնական ցուցանիշները

- Զուտ շահույթն ավելացել է 4%-ով նախորդ տարվա համեմատ, թեև 2022թ. գրանցվել է զուտ շահույթի աննախադեպ բարձր աճ: Աճը պայմանավորված էր հիմնականում զուտ տոկոսային եկամուտով, ինչպես նաև միջնորդավճարներից ստացված եկամուտով: Զուտ շահույթի շարունակական տպավորիչ աճը վկայում է աճի հիմքում ընկած գործոնների կայունության մասին:
- Բարձր շահույթի արդյունքում գրանցվել են նաև շահութաբերության բարձր ցուցանիշներ՝ կապիտալի և ակտիվների եկամտաբերությունը կազմել է համապատասխանաբար 25.6% և 3.5%:
- Ծախսերի և եկամուտների հարաբերակցության աննշան աճը հիմնականում պայմանավորված է անձնակազմի ծախսերի ավելացմամբ՝ գնահատման արդյունքներով վարձատրության փոփոխական բաղադրիչի վերանայման հետևանքով:

**46.1 մլրդ ՀՀ դրամ**

**Զուտ շահույթ**

1. Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ

2. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ կարճ անդրադարձ

3. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ ֆինանսական արդյունքներ

4. **Ռազմավարության հիմնական ուղղությունները**

5. Հավելվածներ

# Ռազմավարական նպատակներ

Արդյունավետության բարձրացում և լավագույն արդյունքի ապահովում

Բացարձակ առաջատար դիրք Հայաստանի բանկային համակարգում

## Միջոցները

Լավագույն փորձ՝ հաճախորդների և աշխատակիցների բավարարվածություն

**Թվային փոխակերպում**

**Դիվերսիֆիկացում**

# Միջնաժամկետ նպատակներ

| | Միջնաժամկետ նպատակներ | Փաստացի |
|---|---|---|
| Կապիտալի եկամտաբերություն | ≥ 18% | 25.6% |
| Ծախսերի հարաբերությունը եկամտին | < 40% | 40.8% |
| Վարկային պորտֆելի տարեկան աճ | երկնիշ | 33.2% |
| Մասնաբաժինը շուկայում (ըստ վարկերի) | > 20% | 19.6% |
| Մանրածախ + ՓՄՁ տարեկան աճը | երկնիշ | 30.6% |

# Ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ հարթակ՝ թվային լուծումների լայն կիրառմամբ

## Հաճախորդակենտրոն թվային էկոհամակարգեր

**ՓՄՁ հարթակ**
sme.ameriabank.am

**Բնակարանային շուկա**
estate.ameriabank.am




**Էլեկտրոնային առևտուր**

**Ավտոշուկա**
automarket.ameriabank.am

**↑ 57% տարեկան**

Ամսական ակտիվ օգտատերերի թիվը (ըստ համակարգ մուտքերի)

**↑ 110% տարեկան**

Գործարքներ մոբայլ և ինտերնետ բանկինգ համակարգով




Թվային ուղիներով վաճառքների մասնաբաժին




Բեռնաթափման ցուցանիշ*

### Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակից




### Կանխիկ գործառնությունների գծով բեռնաթափման ցուցանիշ**




* Հեռավար և թվային ուղիներով կատարված գործարքների մասնաբաժինը բանկի կողմից կատարված գործարքների ընդհանուր թվում
** Հեռավար և թվային ուղիներով (ԻԲ, ՄԲ, POS/VPOS) կատարված անկանխիկ գործարքների մասնաբաժինը գործարքների ընդհանուր թվում

# Հաճախորդների և աշխատակիցների գոհունակություն

| | Ընթացիկ կարգավիճակ | Միջնաժամկետ նպատակներ |
|---|---|---|
| Հաճախորդների գերազանց սպասարկում և բարձր բավարարվածություն | **79.0%** Հաճախորդների հավատարմության գործակից | ≥ 70% |
| | **9.8** Հաճախորդների փորձառության գործակից | ≥ 9.5 |
| Թվային փոխակերպում | **72%** Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակից | ≥ 75% |
| | **85%** Կանխիկ գործառնությունների գծով բեռնաթափման ցուցանիշ | ≥ 80% |
| Աշխատակիցների բավարարվածություն և բարեկեցություն | **84%** Աշխատակիցների բավարարվածության գործակից | ≥ 80% |

# Բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման լավագույն մեթոդները

## Կայունության ապահովման ռազմավարություն

**Երկարաժամկետ պարտավորություն** ստեղծելու կայուն միջավայր և աջակցելու մեր հաճախորդներին չեզոք ածխածնային տնտեսությանն անցնելու գործում:



## Կանաչ պարտատոմսերի թողարկում

- **Կանաչ պարտատոմսերի** առաջին թողարկողը Հայաստանում
- Կանաչ պարտատոմսերի թողարկում՝ **62 մլն* ԱՄՆ դոլարի**
- **ԾևՄ ռիսկերի կառավարում** լավագույն փորձին համապատասխան
- 2023թ. ԿՍՊ ծրագրերին հատկացվել է **270 մլն ՀՀ դրամ:**

### Տեղաբաշխում




## Բիզնեսի պատասխանատու վարում և ներդրում հասարակության բարօրության գործում:

Երեխաների առողջություն ու բարեկեցություն

Կրթական ծրագրեր

Ենթակառուցվածքի և համայնքի զարգացման ծրագրեր

### Ազդեցություն**

**83,172 տոննա** ածխաթթու գազի արտանետումների կրճատում

**201,716,237 կՎտ-ժ** մաքուր էներգիայի արտադրության ընդհանուր տարեկան ծավալ

* 42 մլն եվրո, 3 մլրդ ՀՀ դրամ, 8 մլն ԱՄՆ դոլար

** Կանաչ պարտատոմսերի ազդեցությունը 2023թ.

1. Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ

2. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ կարճ անդրադարձ

3. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ ֆինանսական արդյունքներ

4. Ռազմավարության հիմնական ուղղությունները

5. **Հավելվածներ՝ Արտաքին միջավայր**

# Հայաստան՝ ընդհանուր ակնարկ

## Ընդհանուր տեղեկություններ

ՀՆԱ՝ 24.2 մլրդ (2023, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)

Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ 8.17 հազար (2023, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)

Moody's-ի վարկանիշ՝ Ba3 (կայուն)

Fitch-ի վարկանիշ՝ BB- (կայուն)

S&P վարկանիշ՝ BB- (կայուն)

## ՀՆԱ-ի բարձր միջին աճ և ցածր գնաճ

2013-2022




### Դիվերսիֆիկացված տնտեսություն

ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ արտադրության ճյուղերի*




*Վերջին 4 եռամսյակը

## Ամենակայուն արժույթը տարածաշրջանում

(ԱՄՆ դոլարի նկատմամբ տարածաշրջանի այլ արժույթների փոխարժեքների դինամիկա)**




**Փոխարժեքի օրական փոփոխությունը՝ որպես հիմք ընդունելով 2014թ. հունվար ամիսը Աղբյուր՝ Bloomberg

# Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

## AMD/USD (միջին օրական)




## AMD/EUR (միջին օրական)




## AMD/RUB (միջին օրական)




## ՍԳԻ




## Տնտեսական ակտիվության ինդեքս




### Հիմնական ցուցանիշները

- Բարձր տնտեսական աճը շարունակվել է 2023թ. ընթացքում՝ շարունակելով նախորդ տարվա աննախադեպ 12.6% աճը: Արդյունքում 2023թ. ՀՆԱ-ն աճել է 8.7%-ով (նախնական տվյալներով): Տնտեսական ակտիվության ինդեքսը 2023թ. կազմել է 9.5%: Աճի հիմնական խթաններն էին առևտրի և ծառայությունների ոլորտները: Տնտեսական գործունեությանը նպաստել են նաև արդյունաբերությունը և շինարարությունը:
- 2023թ. գնաճը զգալիորեն նվազել է՝ մարտին սկսելով նկատելի դանդաղում: Հունիսից գրանցվել է որոշակի գնանկում, որը տևեց մի քանի ամիս: 2022թ. վերջում 8.6% գագաթնակետին հասնելուց հետո 2023թ. ընթացքում կուտակային գնաճը նվազել է՝ կազմելով 2%: Հիմնական գնաճը նույնպես նվազել է՝ 2023թ. 1-ին եռ. 8% միջին ցուցանիշից իջնելով մինչև -0.4% դեկտեմբեր ամսին (տարեկան կտրվածքով):
- 2023թ. արդյունքներով ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 9.9%-ով 2022թ. համեմատ (միջին օրական փոխարժեքով), սակայն վերջին ամիսներին փոխարժեքը կայուն է եղել:

Աղբյուր՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե, ՀՀ ԿԲ

# Հայաստան՝ մակրոտնտեսական ցուցանիշներ

## Միջազգային պահուստներ

Մլրդ ԱՄՆ դոլար




## Մասնավոր փոխանցումներ*

Մլն ԱՄՆ դոլար




## Հիմնական ցուցանիշները

- Արտաքին առևտուրը և դրամական փոխանցումները տարեկան կտրվածքով աճել են, ընդ որում դրամական փոխանցումների աճը չափավոր էր՝ նախորդ տարվա բարձր աճի համեմատ։
- Ընթացիկ հաշվի պակասուրդի ցուցանիշն աճել է՝ հիմնականում ներմուծման կտրուկ աճի պատճառով, որը պայմանավորված էր բարձր ներքին պահանջարկով, այդ թվում միջազգային այցելուների հաշվին։

Աղբյուր՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե, ՀՀ ԿԲ

## Ընթացիկ վճարային հաշվեկշիռ**

Մլրդ ԱՄՆ դոլար




## Արտահանում և ներմուծում

Մլրդ ԱՄՆ դոլար




*Փոխանցումները ներառում են ֆիզիկական անձանց՝ բանկերի միջոցով կատարվող ընդհանուր առևտրային և մասնավոր փոխանցումները։

** Թարմացված տվյալները դեռևս առկա չեն։ †Նախնական արդյունքներ

1. Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ

2. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ կարճ անդրադարձ

3. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ ֆինանսական արդյունքներ

4. Ռազմավարության հիմնական ուղղությունները

5. **Հավելվածներ՝ Պատմական իրադարձություններ**

# Մեր հաջողության ուղին

## 1998

Մի խումբ երիտասարդ հայրենադարձ գործարարներ հիմնում են «**Ամերիա» խորհրդատվական ընկերությունը**։

## 2000-2006

Ամերիան դարձավ **ընկերությունների ԽՈՒՄԲ՝** գործունեության նոր ուղղություններով՝ իրավաբանական և հարկային խորհրդատվություն, բիզնես խորհրդատվություն, ներդրումաբանկային գործառնություններ, ակտիվների կառավարում։

## 2007

**1-ին ձեռքբերման գործարքը ՀՀ բանկային համակարգում՝** Հայաստանի ամենաhին, սակայն ամենափոքր բանկերից մեկի՝ Հայներարտբանկի բաժնետոմսերի ձեռքբերում

## 2008-2009

**Բանկը վերանվանվել է Ամերիաբանկ:**
Աննախադեպ աճ համաշխարհային ճգնաժամի պայմաններում։

## 2010

**1-ին միաձուլման գործարքը ՀՀ բանկային համակարգում՝**
Ամերիաբանկի և Կասկադ Բանկի միջև կնքվեց միաձուլման պայմանագիր

## 2011-2014

Ամերիաբանկը դարձավ **Հայաստանի առաջատար բանկը**
Ընդունվեց ռազմավարական որոշում՝ դառնալ ունիվերսալ բանկ՝ էապես ընդլայնելով մանրածախ գործառնությունները

## 2015

30 մլն ԱՄՆ դոլարի **ներդրում կապիտալում ՎԶԵԲ-ի կողմից***
50 մլն ԱՄՆ դոլարի **ստորադաս փոխառություն ՄՖԿ-ից***

1-ին հրապարակված միջազգային վարկանիշը՝ **Fitch B+**՝ «կայուն» հեռանկարով։

## 2017-2019

**ՀՀ բանկային համակարգի բացարձակ առաջատարն** ըստ հիմնական ֆինանսական ցուցանիշների

30 մլն ԱՄՆ դոլարի **ներդրում կապիտալում Ասիական զարգացման բանկի կողմից** (2018թ. սկզբում)**

**Moody's-ի Ba3 վարկանիշ**՝ «կայուն» հեռանկարով
**S&P-ի B+ վարկանիշ**՝ «կայուն» հեռանկարով

## 2020-2023

**Կանաչ պարտատոմսերի** առաջին թողարկողը Հայաստանում
**BB-** վարկանիշ S&P գործակալության կողմից
Ընդհանուր վարկային պորտֆելը կազմեց շուրջ **1 տրիլիոն ՀՀ դրամ**

* Խոշորագույն գործարքը ֆինանսական կազմակերպության հետ Հայաստանում
** Ասիական զարգացման բանկի առաջին բաժնային ներդրումը Հայաստանում

# Մեր բաժնետերերը

| 2007-2013 | 2015 | 2016 | 2018 | 2020 |
|---|---|---|---|---|
| Սփյուռքի գործարարների ներդրումը Հայաստանում՝ բանկի ձեռքբերման միջոցով. «Ամերիա Գրուպ (Սի Ուայ) Լիմիթեդ» ընկերությունը ձեռք բերեց Ամերիաբանկի բաժնետոմսերի 100%-ը: | ՎԶԵԲ-ը դարձավ առաջին միջազգային կազմակերպությունը, որը ձեռք բերեց բանկի բաժնեմաս՝ 30 մլն ԱՄՆ դոլարի ներդրմամբ: | Ստեղծվեց «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթեդ» ընկերությունը, որի գործառույթն է աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի շրջանակներում Ամերիաբանկի ղեկավարների կողմից ձեռք բերված բաժնետոմսերի կառավարումը: | Ասիական զարգացման բանկը կատարեց իր առաջին բաժնային ներդրումը Հայաստանում՝ ձեռք բերելով Ամերիաբանկի բաժնետոմսեր 30 մլն ԱՄՆ դոլարով: | «Աֆեյան Ֆաունդեյշն ֆոր Արմենիա Ինկ.»-ը դարձավ «Ամերիաբանկ» ՓԲԸ ուղղակի բաժնետեր՝ «Ամերիա Գրուպ (Սի Ուայ) Լիմիթեդ» ընկերության համապատասխան բաժնետոմսերի ձեռքբերման արդյունքում: |
















*Ամերիա Գրուպ (Սի Ուայ) Լիմիթեդը վերանվանվել է Իմաստ Գրուպ (Սի Ուայ) Լիմիթեդ

# Պարգևներ և մրցանակներ

**Լավագույն բանկը Հայաստանում**

Բազմաթիվ մրցանակներ առևտրի ֆինանսավորման, ներդրումային բանկային գործունեության, կապիտալի շուկաների և պահառուական ծառայությունների ոլորտներում միջազգային կառույցներից և ֆինանսական հաստատություններից

GLOBAL FINANCE

BEST BANK AWARD 2022 — GLOBAL FINANCE

BEST INVESTMENT BANK AWARD 2021 — GLOBAL FINANCE

**2023, 2022, 2021, 2017, 2016, 2015, 2014, 2013, 2012**

EUROMONEY

EUROMONEY AWARDS FOR EXCELLENCE 2022 — ARMENIA BEST BANK

**2022, 2021, 2019, 2018, 2017, 2016, 2014, 2012, 2011**

FT FINANCIAL TIMES

The Banker — Bank of the Year 2022 — ARMENIA

**2022, 2021, 2017, 2016, 2015, 2014, 2013, 2012**

| 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| FT Financial Times | Euromoney | Euromoney | Global Finance | Euromoney | Global Finance | Euromoney | Euromoney | Euromoney | Euromoney | FT Financial Times | Euromoney | Euromoney | Global Finance |
| | | Global Finance | FT Financial Times | Global Finance | FT Financial Times | Global Finance | Global Finance | | FT Financial Times | | Global Finance | Global Finance | |
| | | | | | | FT Financial Times | FT Financial Times | | | | | FT Financial Times | |

1. Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ

2. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ կարճ անդրադարձ

3. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ ֆինանսական արդյունքներ

4. Ռազմավարության հիմնական ուղղությունները

5. **Հավելվածներ՝ Կորպորատիվ կառավարում**

# Ուժեղ թիմ և կորպորատիվ մշակույթ

1 **Բացառիկ կորպորատիվ մշակույթ,** հորիզոնական կառավարում և միայն արժանիքների վրա հիմնված վարձատրության համակարգ

2 **ՀՀ շուկայում ֆինանսական ծառայություններ մատուցող** ամենապրոֆեսիոնալ և տաղանդավոր թիմերից մեկը

3 **Խորհրդին կից կոմիտեներ**՝ լավագույն միջազգային չափանիշներին համապատասխան

4 **Փորձառու** և բազմակողմանի միջազգային փորձ ունեցող Խորհրդի անդամներ

5 **Լավագույն փորձի վրա հիմնված** կորպորատիվ կառավարման համակարգ և սկզբունքներ

# Տնօրենների խորհուրդ



## Անդրեյ Մկրտչյան

**Տնօրենների խորհրդի նախագահ**

Ունի շուրջ 30 տարվա փորձ առևտրային և ներդրումային բանկինգի ու կառավարման խորհրդատվության ոլորտներում, Հայաստանում ներդրումաբանկային ոլորտի հիմնադիրներից է, մի շարք մասնավոր և պետական կազմակերպությունների խորհրդի անդամ:



## Լինդսի Մ. Ֆորբս

**Տնօրենների խորհրդի անդամ**

Ավելի քան 40 տարվա փորձ առևտրային և ներդրումային բանկային գործառնությունների ոլորտում, որից շուրջ 30 տարին՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկում (ՎԶԵԲ): Նախքան ՎԶԵԲ տեղափոխվելը 13 տարի աշխատել է British Linen Bank-ում՝ Bank of Scotland-ի՝ ներդրումային բանկային գործունեության մեջ մասնագիտացող դուստր ընկերությունում:



## Ֆիլիպ Լինչ

**Տնօրենների խորհրդի անկախ անդամ**

Ավելի քան 35 տարվա փորձ ֆինանսների բնագավառում, որից 20 տարուց ավել՝ Lehman Brothers ընկերությունում ղեկավար պաշտոններում: Զբաղեցրել է Nomura-ի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը Մերձավոր Արևելքի, Ասիա-Խաղաղ օվկիանոս տարածաշրջանի և Աֆրիկայի գծով, իսկ այժմ Stem Capital Partners ընկերության (ուղղակի ներդրումներով զբաղվող անկախ ընկերություն) հիմնադիր գործընկերն է:



## Ռոբերտ ֆոն Ռեկովսկի

**Տնօրենների խորհրդի անկախ անդամ**

Շուրջ 35 տարվա փորձ համաշխարհային մակարդակով ակտիվների կառավարման ոլորտում, մասնագիտանում է զարգացող շուկաների ներդրումային ֆոնդերում, եղել է «Ֆիդելիթի Ինվեսթմենթս» ընկերության՝ զարգացող շուկաների ռազմավարության բաժնի փոխնախագահը և ընկերության պորտֆելի կառավարիչ:



## Ռիչարդ Ֆ. Օգդոն

**Տնօրենների խորհրդի անկախ անդամ**

Ավելի քան 35 տարի ֆինանսական ոլորտում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ ներդրումային բանկերում, ակտիվների կառավարման և խորհրդատվական ընկերություններում (UBS Warburg, Uralsib և այլն), ներկայումս SS ոլորտում գործունեություն ծավալող TrData ընկերության գործադիր տնօրենն է:



## Կախա Կիկնավելիձե

**Տնօրենների խորհրդի անկախ անդամ**

Շուրջ 30 տարվա փորձ առևտրային և ներդրումային բանկերում, երկար ժամանակ եղել է Bank of Georgia Group-ի՝ Վրաստանի առաջատար ֆինանսական հաստատության տնօրենների խորհրդի անկախ անդամ, հետագայում՝ գործադիր տնօրեն: Զբաղեցրել է բարձր ղեկավար պաշտոններ UBS-ում, Rioni Capital-ում և այլ ֆինանսական հաստատություններում:



## Տիգրան Դավթյան

**Տնօրենների խորհրդի անկախ անդամ**

Ավելի քան 30 տարվա հարուստ աշխատանքային փորձ ֆինանսական ոլորտում, ղեկավար պաշտոններ է զբաղեցրել մի շարք առևտրային բանկերում և ավելի քան 8 տարի աշխատել է որպես գլխավոր գործադիր տնօրեն: Ղեկավար պաշտոններ է զբաղեցրել նաև ՀՀ Կենտրոնական բանկում և Եվրասիական տնտեսական հանձնաժողովում:

# Տնօրինություն



## Արտակ Հանեսյան

**Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն**

Ակնառու բանկիր՝ Հայաստանի առևտրային բանկերում ավելի քան 30 տարվա փորձով: Ամերիաբանկի գլխավոր տնօրենն է 2008թ-ից, մինչ այդ ևս զբաղեցնում էր ղեկավար պաշտոններ, այդ թվում՝ գլխավոր տնօրենի տեղակալի և գլխավոր տնօրենի պաշտոններ ՀՀ բանկային համակարգում:



## Հովհաննես Թորոյան

**Ֆինանսական տնօրեն**

Շուրջ 20 տարվա աշխատանքային փորձ ՀՀ բանկային համակարգում, որից 10 տարին՝ Ամերիաբանկում: Պատասխանատու է եղել ռազմավարության, հետազոտությունների, ակտիվների և պարտավորությունների կառավարման ուղղությունների համար: 2022 թ. 3-րդ եռամսյակում նշանակվել է Ամերիաբանկի ֆինանսական գծով տնօրեն:



## Գագիկ Սահակյան

**Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն**

Ավելի քան 25 տարվա փորձ առևտրային բանկինգի և գործարար խորհրդատվության ոլորտներում: Մասնագիտական ուղին սկսել է գործարար խորհրդատվության ոլորտում: «Ամերիա» ՓԲԸ-ն մի քանի տարի ղեկավարելուց հետո ստանձնել է կորպորատիվ բանկային գործունեության գծով տնօրենի պաշտոնն Ամերիաբանկում (2010թ-ից):



## Արման Բարսեղյան

**Մանրածախ բանկինգի տնօրեն**

Ավելի քան 25 տարվա փորձ մանրածախ բանկային գործունեության ոլորտում ՀՀ առևտրային բանկերում, որից 15 տարին «HSBC Բանկ Հայաստան»-ում: Ամերիաբանկի մանրածախ բանկինգի տնօրենի պաշտոնն ստանձնել է 2012թ.:



## Արմինե Ղազարյան

**Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն**

Ավելի քան 20 տարի ՀՀ բանկային համակարգում, հիմնականում մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) ոլորտում: 2008թ-ից զբաղեցնում էր Ամերիաբանկի ՄՌԿ բաժնի ղեկավարի պաշտոնը, իսկ տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրենի պաշտոնն ստանձնել է 2019թ-ին:



## Անդրանիկ Բարսեղյան

**Ռիսկերի կառավարման գծով տնօրեն**

Շուրջ 30 տարվա փորձ ֆինանսական հաստատություններում ռիսկերի կառավարման և տեխնոլոգիաների ավտոմատացման ոլորտում: Ամերիաբանկի Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարի պաշտոնն ստանձնել է 2009թ-ին:



## Գոհար Խաչատրյան

**Գլխավոր հաշվապահ**

Շուրջ 35 տարվա փորձ ՀՀ բանկային համակարգում, որից 10 տարի Կենտրոնական բանկում և ավելի քան 20 տարի որպես գլխավոր հաշվապահ Ամերիաբանկում:

1. Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ

2. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ կարճ անդրադարձ

3. 2023թ. 4-րդ եռամսյակ՝ ֆինանսական արդյունքներ

4. Ռազմավարության հիմնական ուղղությունները

5. **Հավելվածներ՝ ֆինանսական ցուցանիշներ**

# Հաշվեկշիռ

հազար ՀՀ դրամ

| ՀՈԴՎԱԾ | 2023 | 2022 |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 133,374,395 | 112,800,903 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 14,403,924 | 10,721,168 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 24,500,236 | 57,363,607 |
| Միջոցների կարճաժամկետ տեղաբաշխում դրամական շուկայում | 105,493,201 | 142,051,394 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ* | 984,746,562 | 735,543,120 |
| Մինչև մարումը պահվող ներդրումներ | 99,308,586 | 156,701,885 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 27,087,094 | 22,581,859 |
| Այլ ակտիվներ | 20,667,219 | 14,065,870 |
| **Ընդամենն ակտիվներ** | **1,409,581,217** | **1,251,829,806** |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ | - | 69,563 |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 71,773,023 | 66,621,817 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 907,749,557 | 784,634,192 |
| Այլ փոխառու միջոցներ | 34,473,780 | 58,124,688 |
| Ստորադաս փոխառություններ | 29,732,721 | 28,155,324 |
| Այլ պարտավորություններ | 170,064,801 | 142,172,677 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **1,213,793,882** | **1,079,778,261** |
| Բաժնետիր. կապիտալ և էմիս. եկամուտ | 54,741,241 | 54,618,878 |
| Վերագնահատման պահուստ | (911,573) | (1,473,167) |
| Չբաշխված շահույթ | 141,957,667 | 118,905,834 |
| **Կապիտալ** | **195,787,335** | **172,051,545** |

*Առանց արժեզրկման մասհանումների

# Եկամուտ և ծախսեր

հազար ՀՀ դրամ

| ՀՈԴՎԱԾ | 2023 | 2022 |
|---|---|---|
| **Զուտ տոկոսային եկամուտ** | 75,024,900 | 50,459,636 |
| **Զուտ եկամուտ միջնորդավճարներից և այլ նմանատիպ եկամուտ** | 13,766,590 | 9,135,231 |
| Զուտ շահույթ/(վնաս) առևտրային գործառնություններից | 24,456,065 | 41,339,983 |
| Այլ գործառնական եկամուտ/(ծախս) | (7,177,554) | (4,349,687) |
| **Գործառնական եկամուտ** | 106,070,001 | 96,585,163 |
| Կորուստներ արժեզրկումից | (5,451,340) | (4,699,928) |
| Անձնակազմի ծախսեր | (32,480,252) | (28,327,332) |
| Ընդհանուր վարչ. ծախսեր | (10,827,802) | (8,688,985) |
| **Շահույթ/(վնաս) նախքան հարկումը** | 57,310,607 | 54,868,918 |
| Շահութահարկ | (11,258,774) | (10,599,631) |
| **Զուտ շահույթ/(վնաս)** | 46,051,833 | 44,269,287 |

# ՀՀ ԿԲ-ի տնտեսական նորմատիվներ

| ՀՈԴՎԱԾ | 2021 | 2022 | 2023 | ՀՀ ԿԲ պահանջ | Խախտում |
|---|---|---|---|---|---|
| Նվազագույն կանոնադրական կապիտալ (հազ. ՀՀ դրամ) | 54,385,935 | 54,414,765 | 54,466,380 | 50,000 | Չկա |
| Նվազագույն ընդհանուր կապիտալ (հազ. ՀՀ դրամ) | 143,832,191 | 183,483,587 | 224,093,877 | 30,000,000 | Չկա |
| Ն1.2՝ Ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ | 15.29% | 17.40% | 16.77% | 12.00% | Չկա |
| Ն2.1՝ Բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ | 31.84% | 30.42% | 24.60% | 15.00% | Չկա |
| Ն2.1.1.՝ Առաջին խմբի արժույթով բարձր իրացվելի ակտիվներ/առաջին խմբի արժույթով ընդհանուր ակտիվներ | 33.46% | 30.91% | 28.56% | 4.00% | Չկա |
| Ն2.2՝ Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ | 110.18% | 75.48% | 74.92% | 60.00% | Չկա |
| Ն2.2.1՝ Առաջին խմբի արժույթով բարձր իրացվելի ակտիվներ/առաջին խմբի արժույթով ցպահանջ պարտավորություններ | 121.88% | 74.41% | 75.78% | 10.00% | Չկա |
| Ն3.1՝ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափ | 11.75% | 17.36% | 16.62% | 20.00% | Չկա |
| Ն3.2՝ Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափ | 147.15% | 95.47% | 101.11% | 500.00% | Չկա |
| Ն4.1՝ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափ | 3.44% | 1.62% | 2.67% | 5.00% | Չկա |
| Ն4.2՝ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափ | 10.28% | 8.25% | 10.79% | 20.00% | Չկա |
| ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափ<br>ՀՀ դրամ<br>Արտարժույթ | X | X | X | 4%<br>18% | Չկա |
| Արժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի առավելագույն հարաբերակցությունը | 0.07% | 2.58% | 3.58% | 10.00% | Չկա |

# Արտարժութային ռիսկը

Վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ արժույթի




Ավանդների կառուցվածքն ըստ արժույթի



# Եկամտի կառուցվածքը

### Տոկոսային եկամտի կառուցվածքը




### Տոկոսային ծախսերի կառուցվածքը




### Ոչ տոկոսային եկամտի կառուցվածքը




### Միջնորդավճարների և այլ նմանատիպ եկամտի կառուցվածքը



# Եկամտի և ծախսերի կառուցվածքը

### Վարչական ծախսեր

Մլրդ ՀՀ դրամ




### Եկամուտ և ծախսեր

Մլրդ ՀՀ դրամ




### Վարչական ծախսերի կառուցվածքը



# Պատասխանատվության սահմանափակում

Սույն շնորհանդեսում պարունակվող տեղեկությունները չեն անցել անկախ ստուգում, և դրանց, ինչպես նաև սույն շնորհանդեսում արտահայտված կարծիքների ճշգրտության, ամբողջականության և անկողմնակալության վերաբերյալ չկա որևէ հավաստում: Ամերիաբանկը և դրա խորհրդատուները, ներկայացուցիչները, ինչպես նաև բանկի հետ փոխկապակցված անձինք որևէ պատասխանատվություն (անփութության կամ այլ հիմքով) չեն կրում սույն փաստաթղթի կամ դրանում պարունակվող տեղեկությունների օգտագործման հետևանքով որևէ անձի կրած վնասի համար: Սույն փաստաթուղթը չի հանդիսանում առաջարկ, և ոչ այն, ոչ դրա որևէ մաս չի կարող հիմք համարվել որևէ պայմանագիր, համաձայնագիր կամ գործարք կնքելու համար:

Սույն շնորհանդեսը կարող է պարունակել այսպես կոչված «հեռանկարային» պնդումներ, որոնք փաստ չեն հանդիսանում, այլ արտահայտում են մեր սպասումներն ու ակնկալիքները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները: Նշված հեռանկարային պնդումները հիմնվում են Ամերիաբանկի ղեկավարությանը հասանելի ընթացիկ ծրագրերի, գնահատականների և կանխատեսումների վրա և հետևաբար արդիական են միայն դրանց հրապարակման պահին: Մենք չենք պարտավորվում վերանայել դրանք քաղաքականության փոփոխության կամ նոր իրադարձությունների/փաստերի ի հայտ գալու դեպքում: Իրենց բնույթով հեռանկարային դրույթները պարունակում են ռիսկեր և անորոշություններ, որոնց պատճառով ակնկալվող արդյունքները կարող են էապես տարբերվել փաստացի արդյունքներից:

# Ներդրողների հետ փոխհարաբերություններ

Էլ. փոստ՝ ir@ameriabank.am
Հեռ.՝ 374 10 561111
Կայք՝ ir.ameriabank.am
Հասցե՝ ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան փ. 2